[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
8	Նոյեմբեր	2019 թ.		Բ	4423884308
[4] Մատուցման ամսաթիվը					
8	Նոյեմբեր	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 2 5 7 6 7 5 3
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ԳԱՈՒԴԵԱՄՈՒՍ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ ՓԲԸ N 2470102730400000
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈՒՆ 4հարկ սենյակ112
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 5 0 6 6 3 4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին. նախ. աշխ. գործ. վարչ N 900011180081
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ Խորհրդարանի 6
[19] Լրացուցիչ տվյալներ	01.11.2019թ. -07.11.2019թ.
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր — Համար
	Լիազորագիր — Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N Հ/Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Անգլերենից հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	26	1000		26000
Ընդամենը						26000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ PETROSYAN MERI 7610870633

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

08/11/2019 11:59:18

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

15/11/2019 17:09:08

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

04.11.2019թ. ք. Մեղրի

ՀՀ Սյունիքի մարզի դատախազության դատախազ Ա. Սապոնջյանս, ուսումնասիրելով Նորվեգիայի Թագավորության իրավապահ մարմինների կողմից հետախուզվող Սոլվեյգ Լելանդ Հոլբերգի և Խաբաթ Ալի Աքբարի Ստահի վերաբերյալ նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2019 թվականի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 02:40-ին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրիի բաժին բերման է ենթարկվել Նորվեգիայի Թագավորության իրավապահ մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի և 232-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (թմրանյութերի ապօրինի շրջանառությունը) հետախուզվող Նորվեգիայի Թագավորության քաղաքացի Սոլվեյգ Լելանդ Հոլբերգը և Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Խաբաթ Ալի Աքբարի Ստահին, ովքեր նույն օրը ձերբակալվել են:

2019թ. հոկտեմբերի 22-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից Սոլվեյգ Լելանդ Հոլբերգի և Խաբաթ Ալի Աքբարի Ստահի նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 30 օր ժամկետով:

Դեռևս անհրաժեշտ է Սոլվեյգ Լելանդ Հոլբերգի և Խաբաթ Ալի Աքբարի Ստահի նկատմամբ հանձնելու համար կալանավորում կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել դատարան:

ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ի միջոցով ստացվել են՝ Սոլվեյգ Լելանդ Հոլբերգին և Խաբաթ Ալի Աքբարի Ստահին քրեական հետապնդման ենթարկելու նպատակով հանձնելու մասին Նորվեգիայի Թագավորության իրավասու մարմնի միջնորդությունը և կից ուղարկված փաստաթղթերը՝ անգլերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, իսկ վերոնշյալ փաստաթղթերը անգլերեն լեզվով են, նշված փաստաթղթերը անգլերենից հայերեն գրավոր թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Գաուդեամուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Զարուհի Խաչիկի Արևշատյանին (անձնագիր N BA 2842009, վավերական է մինչև 11.05.2026թ.,Երևանի պետական համալսարանի կողմից 13.05.2014թ. շնորհված բանասիրության մագիստրոսի աստիճան՝ թարգմանչական գործ անգլերեն և հայերեն մասնագիտությամբ):

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, Զարուհի Արևշատյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում

թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ի միջոցով ստացված՝ Սոլվեյգ Լելանդ Հոլբերգին և Խաբաթ Ալի Աքբարի Ստահին քրեական հետապնդման ենթարկելու նպատակով հանձնելու մասին Նորվեգիայի Թագավորության իրավասու մարմնի միջնորդությունը և կից ուղարկված փաստաթղթերը անգլերենից հայերեն գրավոր թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Գաուդեամուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Զարուհի Խաչիկի Արևշատյանին (անձնագիր N BA 2842009, վավերական է մինչև 11.05.2026թ.,Երևանի պետական համալսարանի կողմից 13.05.2014թ. շնորհված բանասիրության մագիստրոսի աստիճան՝ թարգմանչական գործ անգլերեն և հայերեն մասնագիտությամբ):

Զարուհի Արևշատյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Զարուհի Արևշատյանին նախազգուշացնել թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ Սյունիքի մարզի
դատախազության դատախազ **Ա. Խ. Սապոնջյան**

<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u>

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ *Զարուհի Արևշատյան*

«04» 11 2019 թ.